## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«04» սեպտեմբերի 2020 թվականի N 742**

## 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 01-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 20-ի թիվ 17 որոշումը և Չարենցավանի համայնքապետարանում 2020 թվականի սեպտեմբերի 01-ին անցկացված աճուրդային հանձնաժողովի թիվ 01 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 5-րդ փողոց թիվ 34 հասցեի բնակիչ Վահե Անդրիասյանին օտարել ք. Չարենցավան Ե.Չարենցի փողոց թիվ 9/5 բնակելի կառուցապատման հողամասը 370440 ՀՀ դրամ արժեքով:
2. Քաղաքացի Վահե Անդրիասյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«04» սեպտեմբերի 2020 թվականի N 741**

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏԿԱՑՈՒՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 20-ի «Չարենցավան համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 7 որոշմամբ սահմանված կարգը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մխիթարյան | Ազատ | AS0460066 | 30,000.00 | դրամ |
| 2 | Մխիթարյան | Արա | 000245563 | 30,000.00 | դրամ |
| 3 | Յարայան | Լարիսա | AM0282552 | 10,000.00 | դրամ |
| 4 | Նազարյան | Աշոտ | AN0277522 | 10,000.00 | դրամ |
| 5 | Ծուղունյան | Նելիկ | AM0545523 | 10,000.00 | դրամ |
| 6 | Սուքիասյան | Խանդութ | AN0776367 | 10,000.00 | դրամ |
| 7 | Խաչատուրյան | Գյուլուզար | AR0508022 | 10,000.00 | դրամ |
| 8 | Մելքոնյան | Մարինա | 009849035 | 10,000.00 | դրամ |
| 9 | Միրզոյան | Վռամ | AR0623853 | 10,000.00 | դրամ |
| 10 | Հունանյան | Անելկա | AN0274879 | 10,000.00 | դրամ |
| 11 | Ավետիսյան | Յուրիկ | AM0409068 | 10,000.00 | դրամ |
| 12 | Հովհաննիսյան | Սիլվարդ | 007693294 | 10,000.00 | դրամ |
| 13 | Ադիլխանյան | Վարդան | AS0608550 | 10,000.00 | դրամ |
| 14 | Պարսամյան | Համիկ | AP0505450 | 10,000.00 | դրամ |
| 15 | Սարգսյան | Ջարմիկ | AM0299960 | 10,000.00 | դրամ |
| 16 | Թորոսյան | Աշխեն | AS0363575 | 10,000.00 | դրամ |
| 17 | Աֆյան | Վրեժ | AK0679090 | 10,000.00 | դրամ |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«02» սեպտեմբերի 2020 թվականի N 740**

## ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

***Դավիթ Ավագյան Գևորգի*** անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան քաղաքի Չարենցի փողոց թիվ 1 հիմնական շինության տարածքում գտնվող առևտրի օբյեկտում, ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N3149/12 առ 2020 թվականի օգոստոսի 26-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N 001611 անդորրագրի դիմումատուն 2020 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N67-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***Դավիթ Ավագյան Գևորգի*** անհատ ձեռնարկատիրոջը 2020 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնքի 3-րդ թաղամաս 39-րդ շենքի թիվ 3 բացվածքում գտնվող առևտրի օբյեկտում, իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառք (Վկայական N 014348):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման,եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ ***Վ. Բարսամյանի*** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«02» սեպտեմբերի 2020 թվականի N 739**

**ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

***«Ֆլեշ» ՍՊԸ-ի*** տնօրեն ***Յաշա Խաչատրյանը*** դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան քաղաքի Շահումյան փողոց թիվ 3 շինության տարածքում գտնվող հեղուկ վառելիքի մանրածախ առևտրի կետում, հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N 3155/12 առ 2020 թվականի օգոստոսի 26-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N 000447 անդորրագրի դիմումատուն 2020 թվականի օգոստոսի 26-ից մինչև 2021 թվականի օգոստոսի 26-ն ընկած ժամանակահատվածի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 67-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***«Ֆլեշ» ՍՊԸ-ին*** տնօրեն ***Յաշա Խաչատրյանին*** 2020 թվականի օգոստոսի 26-ից մինչև 2021 թվականի օգոստոսի 26-ը թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան քաղաքի Շահումյան փողոց թիվ 3 շինության տարածքում գտնվող հեղուկ վառելիքի մանրածախ առևտրի կետում, իրականացնելու հեղուկ վառելիքի վաճառք (Վկայական N 014347):

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ ***Վ. Բարսամյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«02» սեպտեմբերի 2020 թվականի N738**

**ԿՏՐԻՉ ՑՈԼԱԿԻ ԱԴԱՄՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կանոնադրությունը, 2020 թվականի սեպտեմբերի 02-ի թիվ 08 նիստի արձանագրությունը և ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. ***Կտրիչ Ցոլակի Ադամյանին*** /ծնված. 15.11.1953թ./ նշանակել ***Կարեն Հարությունի Ադամյանի*** /ծնված. 05.02.2006թ./ նկատմամբ խնամակալ:

2. Հանձնարարել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին՝ իրականացնել վերահսկողություն ***Կտրիչ Ցոլակի Ադամյանի*** վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«02» սեպտեմբերի 2020 թվականի N 737**

### ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՔԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԱՀԱԳՆ ՄԽՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԱԼԱՓԱՐՍ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍ 3-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4/3 ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով և հաշվի առնելով, որ նշված հողամասը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. **Վահագն Մխոյանի** կողմից 37.2 քմ ավել օգտագործվող հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը;
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«02» սեպտեմբերի 2020 թվականի N 736**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի ապրիլի 06-ի թիվ 516-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումների դրույթներով ՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի սեփականություն համարվող հողատարածքից առանձնացնել 0.00500 հա մակերեսով հողատարածք՝ նկատի ունենալով, որ հողամասի նպատակային նշանակությունն է բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունն՝ այլ հողերի:

2. Առաջացած հողատարածքը հասցեավորել ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Բջնիի խճուղի թիվ 23/3 հողատարածք:***

3. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«02» սեպտեմբերի 2020 թվականի N 735**

### ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12/5 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Արթուր Պետրոսյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 27082020-07-0018 վկայական) ***ք. Չարենցավան Երիտասարդության փողոց թիվ 12/5*** հասցեում գտնվող 47 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը (ներքին մակերես՝ 44.27 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 47 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Արթուր Պետրոսյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 2100 (երկու հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.21).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) դրամ:

3 ***Արթուր Պետրոսյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 98700 (իննսունութ հազար յոթ հարյուր) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 138180 (հարյուր երեսունութ հազար հարյուր ութսուն) դրամ՝ հողամասի գինը:

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Արթուր Պետրոսյանի*** կողմից:

5. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Արթուր Պետրոսյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«02» սեպտեմբերի 2020 թվականի N 734**

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 20-ի «Չարենցավան համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 7 որոշմամբ սահմանված կարգը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բեգջանյան | Վոլոդյա | 001380450 | 20,000.00 | դրամ |
| 2 | Ստեփանյան | Աիդա | AM0798649 | 20,000.00 | դրամ |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## «01» սեպտեմբերի 2020 թվականի N 733

## ԳԱԳԻԿ ՏԻԳՐԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԲՈՂՈՔԸ/ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Քաղաքացի Գագիկ Տիգրանի Վարդանյանը 2020 թվականի հուլիսի 20-ին և 2020 թվականի հուլիսի 23-ին ներկայացրել է վարչական բողոք, որին ի պատասխան ներկայացվել է 2020 թվականի հուլիսի 30-ի թիվ 1024-20 գրությունը, իսկ 2020 թվականի օգոստոսի 03-ին Գագիկ Վարդանյանի կողմից ներկայացվել է դիմում:

Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից 2020 թվականի օգոստոսի 10-ին կայացվել է «Վարչական վարույթ հարուցելու մասին» թիվ 672 որոշումը:

2020 թվականի օգոստոսի 12-ին պատշաճ ծանուցմամբ հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցում էր նաև դիմող Գագիկ Տիգրանի Վարդանյանը:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ անձի դիմումը, բողոքը.

Նույն օրենքի 37-րդ հոդված 1-ին մասի համաձայն՝ Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Նույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Դիմում-բողոքում, ապա նաև նիստի ընթացքում դիմողի կողմից հնչեց այն դիրքորոշումը, որ Չարենցավան քաղաքի Բջնի բնակավայրի 1-ին փողոցի 174-րդ տան կից կառուցված շինությունը օրինական լինելու դեպքում ուսումնասիրվելու է օրինական լինելը հավաստող հիմքերը, իսկ անօրինական լինելու դեպքում՝ օրենքով սահմանված դեպքում ապամոնտաժվի:

Հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0909/05/10 վարչական գործով 2013 թվականի ապրիլի 05-ի որոշմանը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է. «(...)ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքներն անմիջականորեն խախտվել են: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ), իր նախադեպային որոշումներում անդրադառնալով այս հարցին, նշել է, որ վեճը պետք է լինի իրական և իր բնույթով՝ լուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն և ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա (տե՛ս Լը Քոմպտեն և մյուսներն ընդդեմ Բելգիայի թիվ 6878/75 դիմումով ՄԻԵԴ 23.06.1981 թվականի

որոշումը, պարբ. 47, Բենթիեմն ընդդեմ Նիդերլանդների, թիվ 8848/80 դիմումով ՄԻԵԴ 23.10.1985 թվականի որոշում, պարբ. 32) (...)»: Թեև հիշատակված որոշումը վերաբերելի է դատավարական բնույթի հարցերին, ամեն դեպքում վեճը պետք է լինի իրական և իր բնույթով լուրջ, իսկ վարչական մարմնին դիմելու դեպքում՝ պահանջում նշված իրավունքների ենթադրյալ խախտումները հիմնավոր:

Դիմում-բողոքներում բարձրացված հարցի կապակցությամբ՝ այն է Չարենցավան համայնքի Բջնի գյուղի 1-ին փողոցի 174-րդ տան կից կառուցված անասնագոմի ապամոնտաժելու կամ քանդելու մասով՝ ապա հայտնում ենք, որ Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալտնտեսության բաժնի մասնագետների կողմից կատարվել է համապատասխան ուսումնասիրություն, ինչի արդյունքում պարզվել է, որ գոյություն ունեցող, այսինքն՝ 1930-ական թվականներին կառուցված շինությունը վերակառուցվել է դեռևս 2000 թվականի սկզբներին: Դիմողի 2020 թվականի հուլիսի 23-ին ներկայացրած վարչական բողոքի լրացման մեջ նշված ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանի նորմերը չեն տարածվում վերոնշյալ իրավահարաբերության վրա, քանզի այն ընդունվել է ավելի ուշ:

Ինչ վերաբերվում է 2020 թվականի օգոստոսի 03-ին Գագիկ Վարդանյանի դիմումում նշված այն հանգամանքին, որ տվյալ շինությունը չի վերակառուցվել, այլ քանդվել է, որի տեղում դարձյալ այլ հատակագծով և այլ չափերով ու կառուցվածքով շինություն է կառուցվել, ապա նշենք, որ այդ մասով համապատասխան եզրակացություն կարող է տրամադրել մասնագիտացված կազմակերպությունները, որոնք իրավասու են նման գործառույթներ իրականացնել:

ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912 որոշման հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ «հողամասի սեփականատերն ինքնակամ կառույցի օրինականացման նպատակով, ըստ գույքի գտնվելու վայրի, պետք է դիմի համապատասխան համայնքի ղեկավարին(...)»: Հիշատակված որոշումը հստակ կարգավորում է ինքնակամ շինությունները օրինականացնելու համար նախատեսված կարգը, և սույն դեպքում առաջին հերթին դիմող համարվում է տվյալ շինությունը փաստացի տիրապետող կողմը:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստական հանգամանքները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ***որոշում եմ.***

1. Գագիկ Տիգրանի Վարդանյանի 2020 թվականի հուլիսի 20-ին և 2020 թվականի հուլիսի 23-ին ներկայացրած վարչական բողոք, 2020 թվականի օգոստոսի 03-ին ներկայացրած դիմումը՝ ապամոնտաժելու կամ օրինականացնելու մասով՝ մերժել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, ՀՀ Վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» սեպտեմբերի 2020 թվականի N 732

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի բաժի 2020 թվականի օգոստոսի 27-ի թիվ 66-06/3232 գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով., Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի $219.^{1}$-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1. Արա Սարգսի Ջաքունցի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2020 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 11:30-ին, Չարենցավանի համայնքապետարանում/ՀՀ Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, Չարենցավան քաղաք, Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1/:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել վարչական վարույթի մասնակիցներին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«01» սեպտեմբերի 2020 թվականի N 731**

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի բաժի 2020 թվականի օգոստոսի 27-ի թիվ 66-06/3232 գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով., Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219.$^{1}$-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1. Վալյա Գյուլլազարի Խաչատրյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2020 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 12:30-ին, Չարենցավանի համայնքապետարանում/ՀՀ Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, Չարենցավան քաղաք, Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1/:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել վարչական վարույթի մասնակիցներին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«01» սեպտեմբերի 2020 թվականի N 730**

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի բաժի 2020 թվականի օգոստոսի 27-ի թիվ 66-06/3232 գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով., Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219.[1]-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1. Լուսինե Ռազմիկի Սահակյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2020 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 12:00-ին, Չարենցավանի համայնքապետարանում /ՀՀ Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, Չարենցավան քաղաք, Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1/:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել վարչական վարույթի մասնակիցներին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«31» օգոստոսի 2020 թվականի N 729**

## ԱԼԻՆԱ ԱԼԻԲԵԿԻ ԳԻՇՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը, վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի բաժնի 2020 թվականի հուլիսի 29-ի թիվ 66-03/2786 գրությամբ/կից փաստաթղթերով հանդերձ/ հայտնվել է, որ 2020 թվականի հուլիսի 29-ին ժամը 00:30-ի սահմաններում ոստիկանության ծառայողների կողմից շրջայց է իրականացվել Չարենցավան քաղաքի Շահումյան փողոցի կայարանի տարածքում գործող գիշերային ակումբ և պարզվել, որ տվյալ ժամին այնտեղ գործունեություն է իրականացնում անհատ ձեռներեց Ալինա Ալիբեկի Գիշյանը, ով չունի Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան թույլտվություն՝ ժամը 24:00-ից հետո գործունեություն իրականացնելու համար, հետևապես նրա արարքում առկա են <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի>> այսուհետ՝ Օրենսգիրք $169^{16}$ հոդվածով /2-րդ մաս/ նախատեսված իրավախախտման հատկանիշներ՝ Առևտրի և հանրային սննդի օբյեկտները, զվարճանքի, շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, խաղատները և բաղնիքները (սաունաները) առանց թույլտվության ժամը 24.00-ից հետո աշխատացնելը նախատեսված խախտումը:

Հարկ ենք համարում նշել, որ ԱՁ Ալինա Ալիբեկի Գիշյանը հիշյալ խախտումը կատարել է 2019 թվականի սեպտեմբերի 04-ին, որի համար Չարենցավան համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 01-ի <<Ալինա Ալիբեկի Գիշյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին>> թիվ 929 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության, որից հետո նույն արարքը կրկին կատարել է 2019 թվականի նոյեմբերի 27-ին, որի համար Չարենցավան համայնքի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 17-ի <<Ալինա Ալիբեկի Գիշյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին>> թիվ 1137 որոշմամբ կրկին ենթարկվել է վարչական պատասխանատվության: Սույն դեպքում վերջինս նշված արարքը կատարում է մեկ տարվա ընթացքում կրկին, հետևաբար կենթարկվի վարչական պատասխանատվության Օրենսգրքի $169^{16}$–րդ հոդվածի /7-րդ մաս/ համաձայն՝ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը:

Խախտման վերաբերյալ լսումները քաղաքացու ծանուցմամբ իրականացվել է 2020թ. օգոստոսի 20-ին:

Վերոգրյալի հիման վրա, հիմք ընդունելով Օրենսգրքի $219^{1}$-րդ, 305-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի դրույթները, Չարենցավան համայնքի ղեկավարին կից աշխատանքային խմբի 2020 թվականի օգոստոսի 20-ի թիվ 3 նիստի արձանագրությունը՝

***ՈՐՈՇԵՑԻ***

1. ***ԱՁ Ալինա Ալիբեկի Գիշյանին*** ենթարկել վարչական պատասխանատվության՝ Օրենսգրքի $169^{16}$ հոդվածով /7-րդ մաս/ նախատեսված խախտում թույլ տալու համար և նշանակել վարչական տուգանք 350000 /երեք հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ 900135101203 հաշվարկային հաշվին:

3. Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու դեպքում գումարը կգանձվի ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«31» օգոստոսի 2020 թվականի N 728**

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով ***Երամ Մարգարյանի*** 2020 թվականի օգոստոսի 26-ի թիվ 3152/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն ***Երամ Մարգարյանին*** սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Բջնիի խճուղի թիվ 12 հողափարածքը*** բաժանել 3 միավորի և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Բջնիի խճուղի թիվ 12*** (հողամասի մակերեսը՝ 1761.6 քմ),***Չարենցավան համայնք գյուղ Արզական Բջնիի խճուղի թիվ 12/1*** (հողամասի մակերեսը՝ 541.5 քմ) ***և Չարենցավան համայնք գյուղ Արզական Բջնիի խճուղի թիվ 12/2*** (հողամասի մակերեսը՝ 536.9 քմ) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ

**«31» օգոստոսի 2020 թվականի N 727**

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով ***Վլադիմիր Մելքոնյանի*** 2020 թվականի օգոստոսի 26-ի թիվ 3145/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն ***Վլադիմիր և Սփելլա Մելքոնյաններին ընդհանուր բաժնային*** սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Երևանի փողոց թիվ 57 հողատարածքը*** բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Երևանի փողոց թիվ 57*** (հողամասի մակերեսը՝ 0.185628 հա) ***և Չարենցավան համայնք գյուղ Արզական Երևանի փողոց թիվ 57/1*** (հողամասի մակերեսը՝ 0.1000 հա) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» օգոստոսի 2020 թվականի N 726

## 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ճԱՆԱՉՎԱԾ ՎԱՀԵ ԲԱԼԱԲԵԿՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 13-ի թիվ 35 որոշումը և Չարենցավանի համայնքապետարանում 2020 թվականի օգոստոսի 25-ին անցկացված աճուրդային հանձնաժողովի թիվ 01 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության ք.Երևան Խուդյակովի փողոց 84/3, թիվ 44 հասցեի բնակիչ Վահե Բալաբեկյանին օտարել Չարենցավան համայնք գյուղ Արզական վարչական տարածքում գտնվող 07-015-0186-0503 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասը 810600 ՀՀ դրամ արժեքով:
2. Քաղաքացի Վահե Բալաբեկյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«31» օգոստոսի 2020 թվականի N 725**

## ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 1/3 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Վանուհի Ավագյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ N 21082020-07-0139 վկայական) ***ք. Չարենցավան 3-րդ թաղամաս 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 1/3*** հասցեում գտնվող 25.2 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինության (ներքին մակերես՝ 22.23 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 25.2 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Վանուհի Ավագյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) տնտեսական շինության 1 քառակուսի մետրի համար՝ 4200 (չորս հազար երկու հարյուր) դրամ (տարածագնահատման 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.21).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) դրամ:

3. ***Վանուհի Ավագյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 105840 (հարյուր հինգ հազար ութ հարյուր քառասուն) դրամ՝ տնտեսական շինության գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 74100 (յոթանասունչորս հազար հարյուր) դրամ՝ հողամասի գինը:

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Վանուհի Ավագյանի*** կողմից:

5. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Վանուհի Ավագյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«31» օգոստոսի 2020 թվականի N 724**

## ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՕՂԱԿԱՅԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6/3 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Արամայիս Բաբայանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ N 27082020-07-0112 վկայական) ***ք. Չարենցավան Օղակային փողոց թիվ 6/3*** հասցեում գտնվող 51.92 քմ արտաքին մակերեսով սպասարկման օբյեկտը (ներքին մակերես՝ 45.91 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 54 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Արամայիս Բաբայանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) սպասարկման օբյեկտի 1 քառակուսի մետրի համար՝ 18900 (տասնութ հազար ինը հարյուր) դրամ (տարածագնահատման 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.21).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) դրամ:

3. ***Արամայիս Բաբայանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 981300 (ինը հարյուր ութսունմեկ հազար երեք հարյուր) դրամ՝ սպասարկման օբյեկտը գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 158760 (հարյուր հիսունութ հազար յոթ հարյուր վաթսուն) դրամ՝ հողամասի գինը:

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Արամայիս Բաբայանի*** կողմից:

5. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Արամայիս Բաբայանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» օգոստոսի 2020 թվականի N 723

## ԶՈՅԱ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով ***Զոյա Սաֆարյանի*** 2020 թվականի օգոստոսի 27-ի թիվ 3160/07 դիմումը, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 05-ի թիվ 37-Ն որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. ***Զոյա Սաֆարյանին*** կառուցապատման իրավունքով հատկացնել 20 քմ մակերեսով ք.Չարենցավան Ե.Չարենցի. փողոց թիվ 9/9 հողատարածքը՝ մինչև 2035 թվականի դեկտեմբերի 31-ը, տարեկան 28800 (քսանութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ վարձավճարով:
2. Կառուցապատողը շինարարությունը կարող է սկսել միայն Չարենցավանի համայնքապետարանի կողմից տրված շինարարության թույլտվության առկայության դեպքում:
3. Պարտավորեցնել ***Զոյա Սաֆարյանին***
   1) համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքների, ինչպես նաև Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 67-Ն և 68 որոշումներով սահմանված կարգի, կառուցապատման թույլտվություն ստանալու համար վճարել համայնքի բյուջե տեղական տուրք և տեղական վճար,
   2) շինությունը կառուցել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի կողմից հաստատված հատակագծի առկայության դեպքում:
   3) համայնքի 900135101021 հաշվեհամարին վճարել 28800 (քսանութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, որպես հողի վարձի կանխավճար մեկ տարվա համար:
4. Քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնին՝ սույն որոշմամբ նախատեսված պարտավորություններն ու պայմանագրով սահմանված պայմանները 3-ամսյա ժամկետում չկատարելու դեպքում ներկայացնել առաջարկություն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
5. Հանձնարարել ***Բենիկ Բալբաբյանին*** կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«31» օգոստոսի 2020 թվականի N 722**

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏԿԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 20-ի «Չարենցավան համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 7 որոշմամբ սահմանված կարգը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Սողոմոնյան | Ալինա | 008699100 | 10 000,00 | դրամ |
| 2. | Ստեփանյան | Նորայր | 004559902 | 10 000,00 | դրամ |
| 3. | Մուրադյան | Ռուզաննա | AT0495719 | 10 000,00 | դրամ |
| 4. | Սարդարյան | Բախշի | 006771851 | 20 000,00 | դրամ |
| 5. | Մանուկյան | Ռեբեկա | AM0413592 | 10 000,00 | դրամ |
| 6. | Կոշկարյան | Սեդա | 009353699 | 10 000,00 | դրամ |
| 7. | Շահբազյան | Շողիկ | 001568054 | 10 000,00 | դրամ |
| 8. | Մանուկյան | Մելինա | 012348835 | 10 000,00 | դրամ |
| 9. | Թաթարյան | Արմեն | AN0566715 | 30 000,00 | դրամ |
| 10. | Մելքոնյան | Քոչար | AT0498470 | 30 000,00 | դրամ |
| 11. | Գեղամյան | Գևորգ | 002974921 | 30 000,00 | դրամ |
| 12. | Պետրոսյան | Անդրանիկ | AN0228619 | 30 000,00 | դրամ |
| 13. | Վարդանյան | Մարինե | AG0638578 | 20 000,00 | դրամ |
| 14. | Սաքունց | Յուրի | AP0322807 | 30 000,00 | դրամ |
| 15. | Մինասյան | Հայկանուշ | AR0687114 | 10 000,00 | դրամ |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**«28» օգոստոսի 2020 թվականի N 721**

### ԱՇՈՏ ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով ***Աշոտ Շահգալդյանի*** 2020 թվականի օգոստոսի 25-ի թիվ 3126/07 դիմումը, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 05-ի թիվ 37-Ն որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. ***Աշոտ Շահգալդյանին*** տնտեսական շինություն կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով հատկացնել 19.3 քմ մակերեսով ք.Չարենցավան Խանջյան փողոց թիվ 10/5 հողատարածքը՝ մինչև 2035 թվականի դեկտեմբերի 31-ը, տարեկան 6000 (վեց հազար) ՀՀ դրամ վարձավճարով:
2. Կառուցապատողը շինարարությունը կարող է սկսել միայն Չարենցավանի համայնքապետարանի կողմից տրված շինարարության թույլտվության առկայության դեպքում:
3. Պարտավորեցնել ***Աշոտ Շահգալդյանին***
   1) համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքների, ինչպես նաև Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 67-Ն և 68 որոշումներով սահմանված կարգի, կառուցապատման թույլտվություն ստանալու համար վճարել համայնքի բյուջե տեղական տուրք և տեղական վճար,
   2) տնտեսական շինությունը կառուցել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի կողմից հաստատված հատակագծի առկայության դեպքում:
   3) համայնքի 900135101021 հաշվեհամարին վճարել 6000 (վեց հազար) ՀՀ դրամ, որպես հողի վարձի կանխավճար մեկ տարվա համար:
4. Քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնին՝ սույն որոշմամբ նախատեսված պարտավորություններն ու պայմանագրով սահմանված պայմանները 3-ամսյա ժամկետում չկատարելու դեպքում ներկայացնել առաջարկություն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
5. Հանձնարարել ***Բենիկ Բալբաբյանին*** կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«28» օգոստոսի 2020 թվականի N 720**

## ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 19 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Թադևոս Աղաջանյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ N 25082020-07-0125 վկայական) ***ք. Չարենցավան Խանջյան փողոց թիվ 19*** հասցեում գտնվող 20.15 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահի (ներքին մակերես՝ 17.49 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 39.7 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Թադևոս Աղաջանյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Առևտրի սրահի 1 քառակուսի մետրի համար՝ 18900 (տասնութ հազար ինը հարյուր) դրամ (տարածագնահատման 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.21).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) դրամ:

3. ***Թադևոս Աղաջանյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 380840 (երեք հարյուր ութսուն հազար ութ հարյուր քառասուն) դրամ՝ առևտրի սրահի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 116720 (հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր քսան) դրամ՝ հողամասի գինը:

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Թադևոս Աղաջանյանի*** կողմից:

5. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Թադևոս Աղաջանյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**